

Հ. Մատթէոսի այս գրածները տակաւին Մխիթարեաններ հրատարակութեան չտուած՝ Լեհացի Ստեփանոս Ռոշքա (ծն. 28 Մարտ 1670 եւ † 31 Հոկտ. 1739) կը գրէ իր ժամանակագրութեան մէջ. «1693. Գրիգոր Կաթողիկոսն Սոյ եկն ի Հռոմ զուխտն իւր կատարել, ածեալ ընդ իւր զՅակօբ Եպս.ն Հալէպցի եւ զՅօհաննէս (— պէտք է Յովնան սրբագրել, Յովհաննէս անոր քահանայ եղբօրն անունն էր —) Եպս.ն, արարին զդաւանութիւնն երեքեան: Կաթողիկոսն դարձաւ յերկիր իւր, եւ եպիսկոպոսունքն ընդ այլ»: Ռոշքա այն միջոցին Հաւատոյ Տարածման Ս. Ժողովոյն Գարաւնոցն աշակերտ էր, եւ նոյն միջոցին առաւ աստուածաբանութեան վարդապետի վկայական: Սերաստիա միշտ Արքեպիսկոպոսական աթոռ եւ էջմիածնի վիճակ էր. սակայն շրջակայ տեղերն եպիսկոպոսութիւն էր եւ ատեն մը Կիլիկիոյ Կաթողիկոսին վիճակ էր. «Սերաստիա, կը գրէ անանուն ժամանակագիրն (Հ. Ալիշան, Սիսուան, էջ 539), իւր թեմովն, այսինքն՝ Կիւրին, Տարանտայ, Աշոտի, Աղ-տաղ՝ որ այժմ Պօզուղ ասի, եւ Զունդուրու հողն, սոքա Սսայ վիճակ են, նուիրակ եւ առաջնորդ նոցա ի Սսայ կու գան»: Անշուշտ այս մասին Եպիսկոպոս ձեռնագրուեցաւ Յովնան:

Յովնանու Ս. Նշանի մէջ Մխիթարայ հանդիպումը եթէ 1693ին դնելու ըլլանք, Յովնան 28 տարեկան ըլլալու էր եւ ծնած 1665ին յԵւրոկիա (Թոխաթ):